«ԳՐԻՆ ՖԱՐՄԵՐ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն *3*

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն *6*

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն *7*

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն *8*

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն *9*

ՀՀ, Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ.՝ (374 60) 60 70 80; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- *հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.*
- *ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.*
- *գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.*
- *եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.*
- *գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:*

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

23 հունիսի, 2023թ.,
ք.Երևան, Պ.Սևակի 8

'000 դրամ	31/12/22	31/12/21
Ակտիվ		
Հիմնական միջոցներ	9,763,396	10,009,427
Ոչ նյութական ակտիվներ	2,382	2,834
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	-	296
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**9,765,778**	**10,012,557**
Պաշարներ	789,310	613,225
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	1,294	1,570
Առևտրական դեբիտորական պարտքեր	37,532	117,802
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	15,702	34,149
Դրամական միջոցներ	886	16,528
Ֆինանսական ակտիվներ	-	780
Այլ ընթացիկ ակտիվներ	3,693	1,552
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**848,417**	**785,606**
Ընդամենը ակտիվներ	**10,614,195**	**10,798,163**
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ	50,959	50,959
Կուտակված շահույթ (վնաս)	407,507	(318,610)
Էմիսիոն եկամուտ	777,235	777,235
Ընդամենը սեփական կապիտալ	**1,235,701**	**509,584**
Վարկեր	3,310,502	4,925,837
Փոխառություններ	4,777,417	4,185,001
Ակտիվներին վերաբերող շնորհներ	411	637
Հետաձգված հարկային պարտավորություններ	14,276	9,748
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**8,102,606**	**9,121,223**
Վարկեր	851,295	915,619
Փոխառություններ	193,060	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	193,219	217,915
Կանխավճար ծառայությունների համար	1,699	129
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	12,801	15,874
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-թյուն	21,305	16,159
Եկամուտներին վերաբերող շնորհներ	2,509	1,660
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**1,275,888**	**1,167,356**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**10,614,195**	**10,798,163**

Տնօրեն *Դավիթ Կոծինյան*

Գլխավոր հաշվապահ *Տիգրան Օրբելյան*

000 դրամ	31/12/22	31/12/21
Վաճառքից հասույթ	1,966,093	4,398,704
Վաճառքի ինքնարժեք	(1,758,176)	(4,135,224)
Համախառն շահույթ	**207,917**	**263,480**
Գյուղատնտեսական արտադրանքի բերքահավաքի պահին «իրական արժեք հանած վաճառքի հետ կապված ծախսումներ»-ով ճանաչումից օգուտ	2,032,615	4,053,355
Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր	(1,074,697)	(2,168,990)
Գյուղատնտեսական գործունեության արդյունք	**957,918**	**1,884,365**
Իրացման ծախսեր	(506,350)	(859,364)
Վարչական ծախսեր	(122,690)	(159,669)
Դեբիտորական պարտքերի անհավաքագրելիությունից (արժեզրկումից) եկամուտ (ծախս)	(4,037)	1,046
Այլ եկամուտներ (ծախսեր)	(1,055,225)	(156,775)
Գործառնական շահույթ (վնաս)	**(522,467)**	**973,083**
Ֆինանսական եկամուտներ (ծախսեր)	(253,408)	(396,611)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	1,506,519	1,157,743
Շահույթ մինչև հարկումը	**730,644**	**1,734,215**
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	(4,527)	(6,549)
Զուտ շահույթ	**726,117**	**1,727,666**

Տնօրեն Ռոբերտ Կոծինյան

Գլխավոր հաշվապահ Տիգրան Օրբելյան

'000 դրամ	Կանոնա-դրական կապիտալ	Կուտակված (շահույթ) վնաս	Էմիսիոն եկամուտ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**77,110**	**(2,387,255)**	**1,176,000**	**(1,134,145)**
Զուտ շահույթ	-	*1,727,666*	-	**1,727,666**
Ավելացում/պակասեցում	*(26,151)*	*340,979*	*(398,765)*	**(83,937)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**50,959**	**(318,610)**	**777,235**	**509,584**
Զուտ շահույթ	-	*726,117*	-	**726,117**
Ավելացում/պակասեցում	-	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**50,959**	**407,507**	**777,235**	**1,235,701**

Տնօրեն *Դոբերտ Կոծինյան*

Գլխավոր հաշվապահ *Տիգրան Օրբելյան*

'000 դրամ	2022	2021
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	1,990,824	4,474,414
այլ ներհոսքեր	190,875	252,287
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(1,891,327)	(3,040,959)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(481,698)	(449,974)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	(96,911)	(130,917)
այլ արտահոսքեր	(2,431)	(1,160)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(290,668)***	***1,103,691***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների վաճառքից	6,030	-
տրված փոխառությունների մարումից	35,050	(3,565)
տոկոսների ստացումից	4	17
հիմնական միջոցների ձեռքբերումից	(153,306)	(94,340)
փոխառությունների տրամադրումից	(35,000)	310
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(147,222)***	***(97,578)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերից և փոխառությունների ստացումից	2,416,096	7,847,898
վարկերի և փոխառությունների մարումից	(1,995,190)	(8,907,643)
վարձակալության պարտավորությունների մարումից	-	(1,544)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***420,906***	***(1,061,289)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(16,984)**	**(55,176)**
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	1,342	(11,558)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**16,528**	**83,262**
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**886**	**16,528**

Տնօրեն *Դավիթ Կոծինյան*

Գլխավոր հաշվապահ *Տիգրան Օրբելյան*